

ԺԽՏՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՈՒՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գ. Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայերենում ժխտումը արտահայտվում է հականունների, ժխտական նախածանցների, ժխտական դերանունների, բայի ժխտական ձևերի ժխտման իմաստ արտահայտող կապերի, շաղկապների, եղանակավորող բառերի, ինչպես նաև շարահյուսական կառույցների միջոցով: Մ. Աբեղյանը հանգամանորեն խոսել է ժխտման տարբեր դրսևորումների մասին: Թեև նա հակամիջները չի դիտել իբրև բառերի առանձին ձևաիմաստային տեսակ, բայց «առաջադիր մասնիկների» մասին խոսելիս առաջինն է գործածում **հակամիջ** գիտաբառը՝ նշելով, որ **արտ-** առաջադիրի հակամիջն է **ներ-**, **զեր-** հակամիջ՝ **թեր-**, **թերա-**, **ստոր-**, **հակ-** հակամիջ՝ **համ-**, **համ-** հակամիջ՝ **այլ-**, **տար-**, **հակ-**, **ետ-**, **հետ-** հակամիջ՝ **առաջ-**, **նախ-**, **վեր-** հակամիջ՝ **ստոր-**, **տար-** հակամիջ՝ **բաղ-**, **համ-** և այլն¹: Այնուհետև, անդրադառնալով «բացասական մասնիկների» բառակազմական արժեքին, նշում է՝ «առաջադիր մասնիկների կամ նախամասնիկների մեջ առանձին տեղ են բռնում **ան**, **ապ**, **դժ**, **տ**, **չ**, որոնցով կամ բացասվում է բառի հիմնական նշանակությունը, կամ ցույց է տրվում մի հատկություն, մի բան չունենալը»²:

Իրականության մեջ դրսևորվող հակադիր հարաբերությունները լեզվում արտահայտվում են բառային և քերականական հակամիջների միջոցով: Մինչև 70-ական թթ. դրանք ներկայացվել են սեղմ, հակիրճ բնութագրումներով: Հակամիջության, ժխտական նախածանցների հարցերին անդրադարձել են Մ. Աբեղյանը, Մտ. Մալխասյանը, Է. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Ա. Մուքիսյանը, Ս. Գալստյանը, Ալ. Մարգարյանը և ուրիշներ, որոնք իրենց ուսումնասիրություններում լուսաբանել են այս լեզվական երևույթի հետ առնչվող շատ հարցեր, տվել են հակամիջների ընդհանուր բնութագիրը, նրանց իմաստաբանական-ձևաբանական և արտահայտչական ու ոճական արժեքը:

Հակամիջների հիմքում ընկած է հակադրությունը, և դրանք արտացոլում են արտաքին աշխարհի առարկաների, իրողությունների, եղելությունների միջև գոյություն ունեցող հակադրական կապերն ու հարաբերությունները:

Հակամիջային հարաբերությունը դրսևորվում է հիմնականում երկու եղանակով՝ միևնույն երևույթի, առարկայի, հատկանիշի հակադրությամբ (**չար-բարի**, **ուրախ-տխուր**, **պարզ-բարդ**, **կարճ-երկար**, **մեծ-փոքր** և այլն) և բացառումով (**կարող-անկարող**, **գեղեցիկ-տգեղ**, **գոհ-դժգոհ** և այլն): Մի դեպքում խոսքը տարարմատ հակամիջների մասին է, որոնք տրամաբանորեն իրար են կապված հարաբերակցական հասկացությունների հետ՝ իրար հակասող կամ հակադեմ: Այստեղ անդամները պարզապես իրար հակառակ իմաստներ են արտահայտում, և իրար հակադրվող ծայրերի միջև հնարավոր է միջին անդամի ամկայություն, ինչպես՝ **անցյալ-ներկա-ապառնի**, **երեկ-այսօր-վաղը** և այլն:

Մյուս դեպքում խոսքը համարմատ (կամ ժխտական) հակամիջների մասին է, որոնք ունեն իրար հակադրվող դրական և ժխտական անդամներ, որոնցից մեկով լիովին ժխտվում-բացասվում է մյուսի իմաստը կամ նշանակությունը: Ժխտական հակամիջներն արտահայտում են որևէ հատկություն չունենալու, որևէ հատկանիշով օժտված չլինելու հակադրական իմաստներ:

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 169-178:

² Նույն տեղում, էջ 179:

Հականիշ բառազույգերը պետք է ձևաբանորեն միատարր լինեն, այսինքն պատկանեն միևնույն խոսքի մասի: Կան խոսքի մասեր, որոնցով հականիշային բառազույգ չի կազմվում, ինչպես ֆականցները, դերանունների մեծ մասը, կոնկրետ առարկայական իմաստ ունեցող գոյականները (**սեղան, պատ, դուռ...**), կապերը, շողկապները, ձայնարկությունները: Հականիշային հարաբերությունների դրսևորման գործում ակտիվ են ածականները (հատկապես որակական):

Տարարմատ հականիշները կառուցվածքով կարող են լինել.

ա) Պարզ տարարմատ (**ավել-պակաս, սիրել-ատել, բարձր-ցածր**), երբ հականիշները հականիշություն են արտահայտում ուղղակիորեն՝ տարբեր արմատական բառերի անմիջական հակադրությամբ:

բ) Ածանցավոր տարարմատ (**լավություն-վատություն, հյուսիսային-հարավային, քերություն-առավելություն**), երբ հականիշները հականիշություն են արտահայտում հակադիր արմատներով, թեև ունեն միևնույն ածանցները:

գ) Բարդ տարարմատ (**լավատես-վատատես, երկարատև-կարճատև, արագաշարժ-դանդաղաշարժ**), երբ հականիշները հականիշություն են արտահայտում իրարից տարբերվող բաղադրիչներով:

դ) Բարդ ածանցավոր (**լավատեսություն-վատատեսություն, երկարատևորեն-կարճատևորեն, արագաշարժություն-դանդաղաշարժություն**): Բարդ տարարմատ հականիշներից տարբերվում են հավելադիր՝ ածանցային նշանակությամբ:

Կան նաև հականիշներ, որոնք արտահայտվում են՝

ա) Պարզ և ածանցավոր բառերի հակադրությամբ, ինչպես՝ **քաջ-վախկոտ, մուգ-լուսավոր, վիշտ-ուրախություն** և այլն:

բ) Տարբեր ածանցներ ունեցող բառերի հակադրությամբ, ինչպես՝ **ամբողջովին-մասամբ, գլխավոր-երկրորդական, խիզախաբար-երկչոտորեն** և այլն:

գ) Պարզ և բարդ բառերի հակադրությամբ, ինչպես՝ **ծուլ-աշխատասեր, օտար-հոգեհարազատ, թերի-լիակատար** և այլն:

դ) Ածանցավոր և բարդ բառերի հակադրությամբ, ինչպես՝ **կամավոր-պարտադիր, եսճախակի-եազվադեպ** և այլն:

ե) Պարզ կամ ածանցավոր և բարդ ածանցավոր բառերի հակադրությամբ, ինչպես՝ **պարզ (օր)-մառախլապատ (օր), չափավոր-ծայրահեղական** և այլն:

Յուրահատուկ են նույն բայական բաղադրիչով և տարբեր հարադիրներով արտահայտվող բայերը, ինչպես՝ **առաջ գնալ-հետ գնալ, դուրս գալ-ներս գալ** և այլն:

Կան մի շարք բառեր, որոնք միավորվելով **ու(և)** համադասական շողկապով՝ հականիշություն են արտահայտում բարդության ներսում, ինչպես՝ **աջ ու ձախ, առևտուր, հաստ ու քարակ, տակն ու վրա, հին ու նոր** և այլն: Օրինակ՝ **Խոկ երբ ստացավ ծերունու մահամերձ լինելու հեռագիրը, մի վայրկյանում ամեն ինչ տակն ու վրա եղավ նրա սրտի մեջ (Ը-301): Բոլորը ճանապարհ տվեցին նորեկին՝ աջ ու ձախ բաժանվելով երկու շարքերի և շտապելով իրենց դեմքերին տալ ավելի տխուր արտահայտություն (Ը-291): Իմ հերը զես ու դեն է խփվե, դես ու դեն է խփվել ու քնել է (Մ-472):**

Համարմատ հականիշները ունեն նույն արմատը և հականիշություն արտահայտում են նախածանցներով: Նախածանցները, ինչպես գիտենք, բաժանվում են երկու խմբի՝ դրական և ժխտական: Ժխտական նախածանցները հայերենի բուն նախածանցներն են և հայերենի զարգացման բոլոր շրջաններին էլ բնորոշ են: Ժխտական նախածանցներն են՝ **ան-, ապ-, դժ-, տ-, չ-**: Ժխտական նախածանցների անմիջական մասնակցությամբ են կազմվում ժխտական կամ համարմատ հականիշները: Ժխտական նախածանցների դերը բավական մեծ է, և հենց դրանց շնորհիվ է արտահայտվում որևէ հատկությունով, երևույթով, առարկայով օժտված չլինելու, որևէ հատկություն, առարկա չունենալու իմաստը:

Ան- նախածանցը ամենակենսունակ ժխտական նախածանցներից է: Այն ավելանում է բառին և փոխում նրա իմաստը: Մի դեպքում **ան-** ժխտական նախածանցն ավելանում է ուղղակի հակադրվող բառին և արտահայտում ժխտում, բացասում (**քարոյական-անքարոյական, համոզիչ-անհամոզիչ, արդարություն-անարդարություն**), մյուս դեպքում հակադրվող բառի արմատական ձևին է ավելանում և արտահայտում մի բան չունենալու, մի բանից

զուրկ լինելու իմաստ (վախկոտ-անվախ, բախտավոր-անբախտ, շարժական-անշարժ):

Առաջին դեպքում հակամիշտությունն արտահայտվում է միայն ժխտական ածանցով, որն ավելանում է՝

ա) Պարզ բառին, ինչպես՝ սխալ-պնտխալ, տուն-անտուն, բախտ-անբախտ:

բ) Պարզ ածանցավոր բառին՝ ինչպես՝ բնական-անբնական, բուժելի-անբուժելի, օրինական-անօրինական:

գ) Բարդ բառին, ինչպես՝ գիտակից-անգիտակից, բարեհաճ-անբարեհաճ, գրագետ-անգրագետ:

դ) Բարդ ածանցավոր բառին, ինչպես՝ գրագիտություն-անգրագիտություն, գիտակցաբար-անգիտակցաբար, բարեկարգություն-անբարեկարգություն:

Երկրորդ դեպքում հակամիշտերը հակամիշտություն են արտահայտում ոչ թե միայն աննախաձանցի, այլ դրա ու վերջաձանցի իմաստային հակադրությամբ: Համարմատը մի տեսակ չեզոք դիրք է գրավում, իսկ վերջաձանցով (-ական, -ոտ, -(ա)վոր, -եղ, -անի, -ավետ և այլն) եթե մի բան ունենալու, ապա ան- ժխտական մախաձանցով նրան հակառակ իմաստ է արտահայտում (համեղ-անհամ, հոտավետ-անհոտ, արատավոր-անարատ): Ինչպես Աբեղյանն է գրում՝ «... գոյականներից և բայաբներից կազմված ածականների վերջաձանցները սովորաբար դուրս են ընկնում, երբ սկզբից ավելանում է «ան» բացասականը, ինչպես՝ զգայուն-անզգա, գորեղ-անգոր»³:

Մեր դիտարկած օրինակները փորձենք ներկայացնել աղյուսակի տեսքով և բերենք համապատասխան օրինակներ.

Ան+պարզ- Այն ժամանակ նա իր **անմաքուր** խիղճը կտրբեր կրոնամոլության ավազա-

Աղյուսակ 1.

	ան+պարզ	ան+ածանցավոր	ան+բարդ	ան+բարդ ածանցավոր	ան+արմատ	Ընդհանուր քանակը
Նար-Ռոս էջ 3-150	111	137	4	10	115	377
Շիրվանզադե էջ 287-437	132	135	2	6	126	401
Մաթեոսյան էջ 297-447	75	53	10	3	47	188

նում (Շ-336): Այժմ թող նա վարվի ինչպես մի **անազնիվ** մարդ կամ ընդունե իր հոր անեծքը, նա ուրիշ ելք չունի (Շ-297): ... Հոսանքներից և ենթահոսանքներից **անկախ**, կա հուսադող արվեստ և կա հուսալքող այսպես կոչված արվեստ (Մ-323): **Անհարմար** վիճակն ահա իրենք էին ստեղծել, բայց ես էի վերացնելու այդ վիճակը (Մ-308): Նա այդ բոլորը պատմում էր իրեն հատուկ **անսխալ** արագախոսությամբ (Ն-1-19): **Ան+ածանցավոր-** Նշանավորն այն էր, որ այդ սերը նրանց մեջ մնացել էր դեռ վաղ մանկությունից և պահվել էր նրանց սրտում մի այնպիսի **անարատությամբ**, որպիսին եղբայրների մեջ առասպելական պետք է համարել (Ն-1-29):

Անզգայականությունը փոքր առ փոքր սկսեց հեռանալ նրա դեմքից, իսկ երկյուղն ու զարմանքը՝ ավելանալ (Ն-1-77): Նա գղջաց իր **անզգուշության** մասին, ամոթից կարմրեց, և գուցե դա առաջին ամոթն էր նրա կյանքում այն օրից, երբ ճանաչել էր կանանց (Շ-435): **Անզավակության** հարկ իզուր եք գանձել, որովհետև իմ կինը չբեր է, - ժպտալով ասացի ես Վալենտինա Սերգեննային (Մ-318):

Ան+բարդ - Հարությունյանը, իհարկե, այդ շատ պարզ գգում էր, բայց և նա այնքան թուլամորթ, **անհեռատես** և կրքից շուտ բորբոքվող չէր, որ առանց մտածելու ամձմատուր լիներ (Ն-1-50): ... Հայրենիքի զինվորները մեզ կօգնեն կերտելու արվեստի իրենց, ինչպես բանաստեղծն է ասել, **անձեռակերտ** հուշարձանները (Մ-339): Խաղում էր այժմ **անուշադիրք**, մտամոլոր, մի հանգամանք, որ բարկացրեց հորը (Շ-426):

Ան+բարդ ածանցավոր- Օրիորդը շփոթվեց հորեղբոր ստիպիչ հայացքներից և հաղթա-

³ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 179:

հարված, գրեթե **անգիտակցաբար** կառք նստեց (Շ-430): Միքայելը թախանձում էր անվերջ, այնպես որ Դավիթ Ջարգարյանը Շուշանիկի համառ մերժումը համարեց **անբաղաքավարություն** (Շ-430): - ... Իսկ Մոսկվայում դափնիներ կան, ճաշկերույթներ կան, աղջիկների շքեղություն կա,- և մի ծխախոտ վերցնելով **անուշադրությամբ** ուրիշի տուփից՝ ելավ (Մ-322):

Ան+արմատ- Այժմ նրան թվում էր, որ մի **անհայտ** համեստ աղջկա մեջ **հանդիպում** է հակառակը (Շ-381): Մարչելոյի անամոք թախիծը հպվեց նրա ծնկներին, շույց նրա ծնկածալերը և փակչեց ծնկածալերից վեր, թեպետ դա **անհույս** ձեռնարկում էր (Մ-315): Օնասիսն **անհայտ** պետություն էր: Ժակլին Քենեդիի հետ ամուսնությամբ հիմա դարձավ հայտնի պետություն (Մ-305): ... Առաջին միտքը, որ ծագում է նրա գլխում, այն է, որ այդ օրը Ջագունյանը պետք է այցելի իրենց, և այդ գիտակցությունից մի **անսովոր** զվարթություն, մի **անսովոր** ուրախություն պաշարում է նրան (ՆԴ-183):

Ան- ժխտական նախածանցը ժխտական, բացասական իմաստով ածականներ է կազմում հետևյալ խոսքի մասերից.

1. Գոյականներից կազմում է որևէ բան չունենալու, որևէ բանից զուրկ լինելու իմաստով ածականներ (**անհայտ, անտուն, անօգուտ, անզուր, անբախտ և այլն**): Օրինակ՝ Աս'ա, այժմ ո՞վ է մեզանից ավելի արժանավոր ժառանգ, ես՞ իմ շոռայ ու զեխ աննպատակ կյանքով, թե՞ դու՝ քո տնտեսական աշխարհայացքով ու գրքերից բաղած փիլիսոփայությամբ (Շ-320): Օ՛, այդ տղամարդիկ, Մարիա, բոլորն անգութ և խելագարներ են, նրանք երբեք չեն խղճում կնոջ վրա, երբեք չեն մտածում կնոջ դրության մասին (ՆԴ-97):

2. Ածականներից կազմում է ժխտական և բացասական հատկանշային իմաստ արտահայտող ածականներ (**անբարեկամաստ, անարդար, անվճռական, անազնիվ և այլն**): Հատկապես կենսունակ են **-ելի** վերջածանցով ածականները (**անհերքելի, անսպասելի, անտանելի և այլն**): Օրինակ՝ Այո, նա շատ լավ հասկանում էր, որ այդ սերն ապօրինի էր, հետևաբար **անմեղելի** և շատ չարիքներ առաջացնող (ՆԴ-50): Բայց **անծանոթ** ուժն **անհաղթելի** զորությամբ դարձյալ կաշկանդեց նրա կամքը (Շ-362):

3. Բայարմատներից, բայափոխներից կազմում է ածականներ հարակատար և ենթակայական դերբայների ժխտական ձևերի նշանակությամբ (**անսփոփ-չսփոփվող, չսփոփված, անակնկալ-չակնկալվող, չակնկալված, անամոք-չամոքվող և այլն**): Օրինակ՝ Պարոն Հարությունյանը բոլորովին զարմացած մնացել էր, թե ինչ է նշանակում իշխանուհու այդ հանկարծակի **անակնկալ** փոփոխությունը դեպի Պետրովը (ՆԴ-103): Իշխանուհին մի թուուցիկ, **անզգա** հայացք ձգեց Հարությունյանի վրա (ՆԴ-145): Ընկերջն այդպես **անզետ** թողնելը քիչ հետո նրան վատ թվաց, և ուսն ուսիս խփելով նա ասաց՝ «պետք է» (Մ-335):

-ելի վերջածանց ունեցող ածականներից շատերը նույնպես **ան-** նախածանցով ստանում են ենթակայական և հարակատար դերբայների ժխտական ձևերի իմաստ (**անպատմելի-չպատմված, չպատմվող, անբուժելի-չբուժվող և այլն**):

-ում ածանցով վերջացող մի շարք բայանուններից և **-ել, -ած** վերջավորություններով կազմված մի քանի դերբայներից **ան-** նախածանցը կազմում է ածականներ, որոնք առավել հաճախ հանդիպում են խոսակցական լեզվում, ինչպես՝ **անկտրել, անզարգացած, անկուտրում և այլն**:

Ան- նախածանցով կազմված ածականներից կազմվում են գոյականներ, բայեր, մակբայներ, որոնք մեծ կիրառություն ունեն խոսքում, ինչպես՝ **անզորություն, անվճռականություն, անխելություն, անպատվել, անհանգստացնել, անկեղծանալ, անզբաբար, անսպասելիորեն, անամոքաբար և այլն**: Օրինակ՝ Յուրաքանչյուր միավոր վախենում է **անհայտությունից** (Մ-327): Հոգեզնայությունը մի ակնթարթում անհետացավ նրա գունատ դեմքից, որ ստացավ մի տեսակ վշտաբեկ, թախծալից արտահայտություն (ՆԴ-129): Տուն էր գալիս գիշերվա երեք-չորս ժամից ոչ առաջ, քնում էր մինչև երեկո, զարթնում, մի բաժակ թեյ խմում և **անհայտանում** (Շ-391): Նրանք գալարվեցին ու **անշարժացան** ահա այդ փոսի մեջ (Մ-316): Եվ բոլորի ուշադրության միջով շքերթի գնաց Անատոլի Յունզվալդ-Ջուսևի **անամոքաբար** ուղղամիտ խոսքը (Մ-326):

Այլուսակ 2-ում ներկայացված է, թե նշված էջերի սահմաններում **ան-** ժխտական նախածանցով կազմված բառերը որ խոսքի մասին են պատկանում: Ինչպես երևում է, ածա-

Աղյուսակ 2.

	Ածական	Փոյական	Բայ	Մակբայ	Ընդհանուր
Նար-Ռոս էջ 3-150	315	36	6	19	377
Շիրվանգառի էջ 287-437	341	29	13	5	401
Մաքեուսյան էջ 297-447	140	21	10	6	188

կանները իրենց քանակով գերազանցում են մյուս խոսքի մասերին: Ան- ժխտական նախա- ծանցով կազմված ածականները մյուս ածականների նման կիրառվել են գոյականաբար, խոսքում կատարել են գոյականին բնորոշ պաշտոններ, ինչպես նաև հղովվել են և ստացել հոգնակի քիվ (տե՛ս աղ. 3): Օրինակ՝ Եվ ինչ եք կարծում՝ մի՞թե մի այդպիսի միտք հայտնո- ղը հիմար, տգետ ու **անտաշներից** մեկը չպետք է լինի (Ն-Ղ-93): Ինչպե՞ս գրկել այդ **անմեղ- ներին** իրենց մորից և թողնել նրանց, որ տառապեն կարոտից (Ը-335): Էս **անպետքի** մեջ տեսնենք էլ ինչ որդեր են շարժվում (Մ-352):

Այժմ ներկայացնենք, թե որ խոսքի մասերից են կազմված վերը նշված ածականները.

Աղյուսակ 3.

	Փոյականաբար
Նար-Ռոս էջ 3-150	1
Շիրվանգառի էջ 287-437	13
Մաքեուսյան էջ 297-447	11

Ինչպես երևում է օրինակների հիման վրա կատարված հաշվումներից, ածականներն ամենակատիվն են:

Ան- ժխտական նախածանցը դրական իմաստ է հաղորդում այն բառերին, որոնց

Աղյուսակ 4.

	Փոյականից	Ածականից	Բայերմասից, բայախմբից	Ընդհանուր
Նար-Ռոս էջ 3-150	73	168	74	315
Շիրվանգառի էջ 287-437	76	192	73	341
Մաքեուսյան էջ 297-447	46	63	31	140

սկզբնական ձևերը ունեցել են բացասական իմաստ, ինչպես՝ **կեղծ-անկեղծ, քիծ-անքիծ, քե- քի-անքիքի, մեղավոր-անմեղ, սխալ-անսխալ** և այլն:

Ժամանակակից հայերենում **ան-** նախածանցով կազմված այնպիսի բառեր կան, որոնցում արմատները վաղուց գրկվել են ինքնուրույն գործածությունից, նրանց իմաստն ար- դեն հնացած է կամ մթազնված: Օրինակ՝ **անդունդ, անդորր, անքթիթ, ամբարիշտ, անողջ** և այլն:

Ապ- (բաղաձայնից առաջ **ապա-**) ժխտական նախածանցը համեմատաբար քիչ գոր- ծածական է: Ինչպես նշում են՝ «նրանով հնից հայտնի են միայն ապաշնորհ, ապարդյուն, ապերջանիկ, ապերասան, ապերախտ, ապիկար, ապուշ, ապախով բառերը, որոնցում ժխտականի իմաստը հավասար է **ան-** ժխտական ածանցի իմաստին. ինչպես՝ ապա- բախտ//անբախտ=բախտ չունեցող»: Այժմ **ապ-** ածանցը առավել ակտիվ է, սակայն, ինչ- պես նշվեց, **ան-** նախածանցը ևս կարող է նույն իմաստով բառեր կազմել, և առավել հաճախ

խոսքում կիրառվում են հենց **ամ-** նախածանցով կազմված ձևերը:

Ապ- ժխտական նախածանցը ներկայումս առավել կենսունակ է հասարակական-քաղաքական և գիտական տերմինաբանության մեջ, ինչպես օրինակ՝ **ապանխում, ապաքաղաքական, ապազգայնացում, ապատեղեկացում, ապայետականացում, ապամագնիսացում, ապակենտրոնացում, ապագոռում** և այլն: Բառակազմությանը ամենից շատ մասնակցում է **ապուշ** բառը, որի **ապ-** բաղադրիչը վաղուց արդեն որպես ածանց չի գիտակցվում:

Դժ- ժխտական նախածանցը պահպանվել է միայն որոշ բառերում և գործուն, խիստ կենսունակ ածանց չէ: Մի շարք բառեր կան, որոնցում **դժ-** թեև բառին բացասական իմաստ է հաղորդում, սակայն չի դիտվում որպես ժխտական նախածանց: Այս բառերում արմատների իմաստները չեն գիտակցվում ժամանակակից հայերենում և առանձին կիրառություն չունեն: **Դժ-** ժխտական նախածանցը, հետևաբար, գիտակցվում է որպես ժխտական նախածանց միայն այն բառերում, որոնց արմատները առանձին գործուն և գիտակցվում են որպես բառային միավորներ: Դրանցից մի քանիսն էլ դառնում են նոր բաղադրությունների նախատիպեր, ինչպես՝ **դժգոհ-դժգոհություն, դժգոհանք, դժբախտ-դժբախտանալ, դժբախտություն, դժբախտաբար, դժկամ-դժկամություն-դժկամորեն, դժգույն-դժգունություն-դժգունել** և այլն: Օրինակ՝ Ամբողջ տասը տարի նա վարում է յուր պաշտոնը, և ոչ ոք նրա մասին մի **դժգոհություն** չէր հայտնել (ՆԴ-6): Այսօր նա միանգամայն **դժբախտ** է համարում իրեն (Շ-377): **Դժբախտը դժբախտին** կհասկանա (Մ-306):

Զ- ժխտական նախածանցով սակավաթիվ բառեր կան, որոնք կազմված են բայական հիմքերից, ունեն ժողովրդախոսակցական ծագում, ինչպես **չբեր, չունևոր, չխոս, չկամ, չհաս** և այլն: Ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը՝ «...այս դեպքում հանդես է գալիս որպես ածականակերտ ածանց՝ **չբեր, չխոս, չկամ, չհաս, չտես** և այլն. չ-ով բառերը փաստորեն չձևավորված ժխտական դերբայների արժեք ունեն՝ չբեր =չբերող, չտես=չտեսած և այլն»⁴: Օրինակ՝ Աչքը նրա դեմքին՝ նրա չբեր կինը մի աննշմար ծամածոթության է սպասում, որ թողնի հեռանա իր դժբախտությունը գրկած ... (Մ-300): Չեր կինը **չբեր** չի, դուք երկու երեխա ունեք (Մ-318): **Ջ-** ն որպես ժխտական մասնիկ այժմ գործառուում է բայերի ժխտական ձևերը կազմելիս, ինչպես՝ **չտեսնել, չխոսել, չերգել** և այլն:

Տ- ժխտական նախածանցը նախորդի մնան հանդես է գալիս սակավաթիվ բառերում, որոնք հիմնականում բայահիմքեր են, կան նաև որոշ ածականական և գոյականական հիմքերով կազմված բառեր, ինչպես՝ **տզեղ, տզետ, տձև, տհաս, տհաճ, տկար, տմարդի** և այլն: **Տ-** նախածանցը քարացած է **տխուր, տքնաջան, տխմար** բառերում: Օրինակ՝ Ես մարդ սպանելն այնքան մեղք չեմ համարիլ, որքան ձեզ **տզեղ** համարելը (ՆԴ-85): Գնալով Ռուսիա՝ նա այնտեղից բերել է կեղծ դրամներ և **տզետների** վրա սաղացրել (Շ-288):

Այժմ փորձենք մեկ աղյուսակով ներկայացնել ժխտական նախածանցների գործածության հաճախականությունը.

Աղյուսակ 5.

	Ան-	Ապ-	Դժ-	Զ-	Տ-	Ընդամուր
Նար-Գոս էջ 3-150	377	8	6	0	8	399
Շիրվանզադի էջ 287-437	401	12	20	0	11	444
Մաքիտյան էջ 297-447	188	0	5	10	13	216

Համարմատ հակամիջներ են կազմում ոչ միայն ժխտական ածանցներով, այլ նաև հակամիջ ածանցներով: Դրանք տարբեր են ձևով և հակադիր են իմաստով: Հակամիջ ածանցներից են՝

⁴ Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979, էջ 401:

⁵ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 157:

- Արտ - ներ - արտահանել-ներմուծել, արտագաղթ-ներգաղթ:**
- Քաց - ներ - բացակա-ներկա, բացառում-ներառում:**
- Հակ - համ - համանիշ-հականիշ, համադրում-հակադրում:**
- Տար - համ - տարարմատ-համարմատ, տարակարծիք-համակարծիք:**
- Գեր - քեր - գերազնահատում-քերազնահատում** և այլն:

Օրինակ՝ Եվ որտե՞ղ է գրած, թե Ռուսաստանը պետք է **կինոներմուծող** լինի և ոչ **թե արտահանող**, Ռուսաստանն այդ երբևեցի՞ց դարձավ ուրիշների մշակույթով ապրող (Մ-334):

Ոճական-արտահայտչական մեծ դեր ունեն բուն բառային հակամիջները, որոնք, որպես իրար հակադիր կամ հակառակ իմաստներ արտահայտող գույգեր, գոյություն ունեն մարդկանց գիտակցության մեջ: Հակամիջները ոճական-արտահայտչական առավել ցայտուն դեր են կատարում, երբ հակադրվում և իբրև հակադրույթ (antithesis) են գործածվում: Խոսքում, երբ հակամիջները հանդես են գալիս միաժամանակ, հակադրության իմաստն ավելի է շեշտվում: Օրինակ՝ Իհարկե, հեզոնց նա, մինչև հիմա էնքան մարդու ենք **ուրախացրել**, որ մի հոգու արդեն կարող ենք **վշտացնել** (Մ-300): Ամերիկացիներից **գնել ենք** յոթանասունհինգ կինոնկար, ամերիկացիներին **վաճառել ենք** տասնչորս միավոր ... (Մ-334): Մենք, իհարկե, **պիտանի հաջողակ ենք** և ձեռ ենք առնում **անպիտան ձախողակներին** (Մ-300): Մեկը զավակներին է **սիրում**, կնոջն **ատում**, մյուսի կինն է դավաճանում, երրորդը՝ ուղղակի չի հաշտվում կնոջ բնավորության հետ (Շ-393): Պատկերացնում էր երկու հակառակ տարրերմեկը **դրական**, մյուսը **բացասական**, և երևակայում իրեն մեջտեղը (Շ-423): Միտքը **կամահական** սլանում է հեռու և հեռու, և **մտացածին** դժոխքը դառնում է իրական... (Շ-379):

Թե շաղկապի միջոցով հակամիջներն արտահայտում են թեականություն, ինչպես նաև վերջինիս շնորհիվ հակադրությունը մեղմանում է: Օրինակ՝ Մինևույն է, եթե ինքը չհայտնի, **վաղ թե ուշ** Պետրոսը պիտի իմանա ... (Շ-400): ... Աղջնակ ժամանակ նրա նյարդերի գաղտնարաններում ավտովթարից մի բան ծովել էր և հասունացման հետ առաջացել **սխալ թե ճիշտ** հունով (Մ-315): Զգիտե՛մ **լուրջ ես թե անլուրջ** (Մ-341):

Հակամիջները գեղարվեստական, արտահայտչական և ոճական առանձնահատուկ դեր են կատարում նաև այն դեպքում, երբ իրար հակադրվելուց բացի հանդես են գալիս միասնաբար՝ իբրև ստորադասական կապակցություն (օբսիմոդոն), ինչպես օրինակ՝ **անմեղ մեղավորներ, կենդանի դիակ, բախտավոր անբախտ** և այլն: Օրինակ՝ Հեղինակը դրանը դրեց «Մահացյալ անմահների» մեջ, գլուխ տալով և մի սպառնական թունալի հայացք ձգելով Ջարգարյանի վրա, դուրս գնաց (Շ-369): Սիրուհիներ է պահում, այն էլ մի քանիսը. քաղաքի համարյա բոլոր թաղերում և ինչ **գեղեցկուհիներ**, մեկը մյուսից **այլանդակ** (Շ-332): Մրանք կազմվում են և՛ տարարմատ, և՛ ժխտական հակամիջներով: Մեծ մասամբ արտահայտվում են ածականով ու գոյականով (**քաղցր տանջանք, դառը ծիծաղ**), հազվադեպ՝ գոյականներով (**վշտի ծիծաղ**), բայով ու հատկանիշ ցույց տվող որևէ բառով (**դառը ծիծաղեկ, քաղցր լաց լինել, հանգիստ գայրանալ, ցածրաձայն ճչալ**):

Հակամիջները անփոփոխ չեն մնում. մարդկային միտքը ստեղծել ու ստեղծում է նաև այնպիսի հակամիջներ, որոնք ընդհանրական արժեք չունեն և կիրառվում են այս կամ այն հեղինակի խոսքում՝ հատուկ նպատակով: Ի տարբերություն բուն բառային հակամիջների, այդպիսի հակամիջները կոչվում են անհատական, հեղինակային կամ խոսքային, որոնք առավելապես ոճական-արտահայտչական դեր են կատարում: Դրանք ստեղծվում են առանձին հեղինակների կողմից՝ որևէ իրողություն ավելի վառ ու արտահայտիչ պատկերելու համար: Առավելապես դրանք կապված են բառերի փոխաբերական իմաստով գործածվելու հետ, ինչը հեղինակներին լայն հնարավորություն է տալիս խոսքն արտահայտիչ և պատկերավոր դարձնել: Օրինակ՝

մարդ-հրեշ-

- Օրիորդ, կարծես դուք ինձ հրեշ եք համարում:
- Ինչու, ով ասաց, **հրեշ** չեք, բայց...
- Բայց և **մարդ** էլ չեմ, ուզում եք ասել երևի (Շ-433):

աղքատ-իշխան-

- Ուրիշ պատմություն գտիր, բայց, սիրելիս, թող **քեզ** չթվա, **թե** մենք ահա սիրոնի **աղքատ ենք**, դու՛ արծաթավոր **իշխան**, ելել ու վանքի բակում շռայլում ես ոսկիներդ (Մ-348):

լիություն-սով-

- Աշխարհը լիությունից տրաքում է՝ սրանք մույն կիսաքաղցն են, աշխարհը սովից է ոռչում՝ սրանք մույն կիսաքաղցն են (Մ-351):

Խոսքային կամ հեղինակային հակամիջների հետ են կապված մահ օքսիմորոնները, դրանք ևս հանդիսանում են անհատական ոճական հնարանք, ուստի լեզվում սակավ կիրառություն ունեն:

Անփոփելով նշենք, որ հակամիջները ընդհանրապես ունեն բավական հարուստ իմաստաբանական կազմ և արտահայտում են բազմազան՝ ժամանակի, տեղի, տարածական, չափի ու ծավալի, ձևի, տարատեսակ գործողությունների և այլ հատկանշային հակադրական իմաստներ: Դրանք պատկանում են բառիմաստային միևնույն խմբերին, գործածվում են գրեթե միևնույն բառակապակցություններում, ունեն ոճական-արտահայտչական մեծ արժեք: Խոսքից դուրս հակամիջները օժտված են իրար հակադիր կամ հակառակ իմաստներ արտահայտելու հատկությամբ, ինչը հնարավորություն է ընձեռում որոշելու, թե բառապաշարում որ բառը ինչ իմաստով կամ նշանակությամբ կհակադրվի մյուսին, այսինքն՝ լեզվի բառապաշարում որ բառերն են հակամիջություն արտահայտում:

ՀԱՄԱՌՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԳ - Նար-Ղոս, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, Երևան, 1989:

Շ - Ալեքսանդր Շիրվանզադե, Երկեր հինգ հատորով, հ. 3, Երևան, 1987:

Մ - Հրանտ Մաթևոսյան, Վիպակներ, Երևան, 1990:

Г. Л. ГРИГОРЯН- Выражения отрицания в словарной системе.- В статье рассматриваются выражения отрицания в лексической системе, проявление характерного соотношения, которое в основном имеет два проявления и противопоставление исключением, подробно рассматриваются исключение и противопоставление. Анализируются однокоренные или антонимы и связанные с ними, разнокоренные антонимы и их структура, наряду с этим рассмотрены также отрицательные приставки. Затем говорится о стилистике- выразительной роли антонимов, приводятся примеры.

Все рассмотренные примеры представлены в виде таблицы с соответствующими статистическими данными.